

Մեր հյուրն է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը



Համալսարանի գիտակորդիանցիոն խորհրդի անդամիկ Գիտության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Հարությունյանն էր:

Իր բացման խոսքում շնորհակալություն հայտնելով հրավերի համար, նա ներկայացրեց իր զեկույցի բուն նպատակը, այն է՝ ներկայացնել **գիտության և գիտատեխնիկական գործունեության բնագավառում մեր պետության կողմից իրականացվելիք բարեփոխումները**: Նա մասնավորապես նշեց, որ մինչև 2006թ. գիտության ոլորտում գրեթե ոչ մի տեղաշարժ չի նկատվել: Գիտության նկատմամբ տիրել է համատարած անուշադրություն, ինչը պայմանավորված է եղել նրանով, որ մեր երկիրը հենց անկախացման առաջին տարիներից լուրջ տնտեսական և քաղաքական խնդիրների առաջ է կանգնել: 2000-ական թվականներին Հայաստանի տնտեսության տարբեր բնագավառներում գրանցվել է աճ, նկատվել են տնտեսության զարգացման բավականին հստակ միտումներ: Պարզ է դարձել, որ հարկավոր է վերադառնալ նախկին ավանդույթներին, որտեղ գիտությունը տնտեսության մեջ ուներ բավականին լուրջ դերակատարում, հատկապես ՀՀ-ում: Համեմա-

տություն կատարելու նպատակով նշվեց, որ ԽՍՀՄ տարիներին մեր երկրում կային շատ հիմնարկություններ, որոնք լրջորեն զբաղվում էին գիտության խնդիրներով, նպատակաուղղված էին ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանը, և գիտության հատկացվող գումաների շուրջ 70%-ը ծախսվում էր հենց այդ նպատակով: Հստակորեն ասել, թե ինչ գումար էր ծախսվում գիտության վրա այն տարիներին՝ դժվար է ասել: **Խորհրդային ժամանակներում Հայաստանում տարեկան գիտության վրա ծախսվում էր շուրջ 500-600 միլիոն դոլար: Միայն ֆիզիկայի ինստիտուտի բյուջեն կազմում էր մոտավորապես 45 միլիոն դոլար, որը 2 անգամ շատ է, քան այսօրվա Հայաստանի գիտության բյուջեն**: Հաշվի առնելով այս բոլորը՝ 2005թ. որոշում կայացվեց գիտության ոլորտում նոր ժամանակներին համահունչ խաղի կանոններ սահմանել, որպեսզի մեր երկիրը հնարավորինս արագ ինտեգրվի համաշխարհային գիտակրթական տարածք: **2005թ. ստեղծվեց 3 հանձնաժողով, որոնք պետք է մշակեին մեր գիտության զարգացման ռազմավարությունը առաջիկա տարիների համար**: 2007թ. ընդունվեց այդ 3 հանձնաժողովների մշակած «Գիտության զարգացման ռազմավարության հայեցակարգային դրույթներ» փաստաթուղթը, որում առաջարկվում էր ստեղծել մի նոր կառույց, որն իր վրա կվերցներ պետության կողմից գիտության և գիտատեխնիկական գործունեության զարգացման ամբողջ քաղաքականությունը, կստեղծեր համապատասխան պայմաններ գիտություն-կրթություն-արտադրություն կապի համար, կնպաստեր միջազգային կապերի զարգացմանը և այլն: Այդ կառույցը հետագայում անվանվեց գիտության պետական կոմիտե, որը առաջին հերթին լուծեց մի շարք օրենսդրական խնդիրներ: Կատարվեցին մի շարք

փոփոխություններ «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներում: Միայն վերջին 4 տարիների ընթացքում ընդունվեցին ՀՀ կառավարության թվով 30 որոշումներ, որոնց գերակշիռ մեծամասնությունը բնութագրվում էր համակարգաստեղծ էին: ԳԴԿ կողմից մշակվեց 2011-20թթ. գիտության զարգացման ռազմավարությունը և որոշվեցին ՀՀ-ում գիտության գերակա ուղղությունները, որոնց շարքում բժշկագիտությունն իր կարևորությամբ զիջում է միայն հայագիտությանը և հումանիտար գիտություններին:

Անդրադարձ կատարվեց մեր երկրում գործող հետազոտական կազմակերպություններին, որոնց թիվը ներկայումս 68 է՝ 3 տարի առաջ գործող 87-ի փոխարեն: Նշվեց, որ հետազոտական ինստիտուտների թիվը կշարունակի նվազել, քանի որ ՀՀ կառավարությունը որդեգրել է մի սկզբունք, համաձայն որի՝ ուսումնասիրության խնդիրներով միմյանց մոտ կանգնած կազմակերպությունները պետք է խմբավորվեն:

Վստահաբար, **ԵՊԲ-ն և իր կազմում կունենա մի քանի հետազոտական ինստիտուտներ**:

ԳԴԿ նախագահը նշեց, որ ՀՀ-ում մշակվել է անկախ փորձաքննության այնպիսի համակարգ, որը դրական փորձի օրինակ է հանդիսանում ԱՊՀ շատ երկրների համար: Այսօր գիտական փորձաքննությունն իրականացվում է 1500 անկախ փորձագետների կողմից, որոնցից 500-ը մեր արտասահմանցի գործընկերներն են, որոնք պատրաստական են անվճար աջակցելու մեզ՝ ծրագրերի փորձաքննության աշխատանքներում:

Ստեղծման առաջին իսկ օրից ԳԴԿ-ն իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել ԽՍՀՄ-ից ժառանգած մարդկային և նյութական ռեսուրսները, գնահատել դրանց պոտենցիալը: Ստեղծված տվյալների բազաները հնարավորություն են տալիս գործել արդյունավետ և կատարել ճիշտ ընտրություն փորձագետների հարցում, քանի որ փորձագետը այն մարդն է, ով արդեն կատարել է բոլոր հնարավոր սխալները:

Անդրադառնալով միջազգային ամսագրերում գիտական հրատարակությունների որակին և քանակին՝ Ս. Հարությունյանը հայտնեց

մի ուշագրավ տեղեկատվություն, ըստ որի՝ ԱՊՀ 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում ներկայացվել են տվյալներ այն մասին, որ Հայաստանը՝ լինելով ծանր տնտեսական և քաղաքական կացությանը, ունեցել է թվով ավելի շատ միջազգային հրապարակումներ, քան ցակացած այլ ԱՊՀ երկիր:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ (պայմանագրային) ծրագրերի առնչությամբ նույնպես կատարվել են արմատական փոփոխություններ:

1993թ. համեմատությամբ կրճատվել է ֆինանսավորվող ծրագրերի քանակը, ինչի հաշվին զգալիորեն խոշորացել են ֆինանսական ներդրումները յուրաքանչյուր ծրագրի համար:

Արդյունքում՝ բարձրացել է իրականացվող գիտական հետազոտությունների որակն ու արդյունավետությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախկինում գործող 750-800 գիտական թեմաների պայմաններում ավելի քիչ գործուղումներ և արժեքավոր գիտական հրապարակումներ են եղել, քան ներկայումս գործող 130 թեմաների պայմաններում: Միայն 1 տարվա ընթացքում եղել են 200-ից ավելի գիտական գործուղումներ արտերկիր, տպագրվել են 740 գիտական աշխատություններ, որոնցից 383-ը՝ արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում և գիտական ժողովածուներում:

Գիտաշխատողների երիտասարդացման ուղղությամբ ևս լուրջ ուսումնասիրություններ են կատարվել, որից ակնհայտ է դարձել, որ գիտությամբ զբաղվողների ամենակտիվ տարիքային տիրույթում (35-55 տարեկան) մեր երկիրը գրանցել է նվազագույն արդյունք: Նշելով, որ այս պատկերը առկա է ԱՊՀ բոլոր երկրներում, Ս. Հարությունյանը պարզաբանեց, որ այս իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո գիտության ոլորտում հաջողություն ունեցող երիտասարդները մեկնել են արտերկիր: Իրավիճակը շտկելու համար մշակվել են հատուկ ծրագրեր գիտաշխատողների երիտասարդացման ուղղությամբ, որոնցից է օրինակ **ասպիրանտների աջակցության ծրագիրը**: Մինչև վերջերս գիտա-

կան ծրագրերի ղեկավարները տարիներ շարունակ հանդիսացել են միևնույն մարդիկ, որոնց միջին տարիքը անցել է 60-ի սահմանը: Այսօր ՀՀ-ում գործող գիտական ծրագրերի ղեկավարների 30%-ը մինչև 30 տարեկան երիտասարդներ են:

Գիտության զարգացման և միջազգայնացման խնդրի կապակցությամբ նշվեց, որ գիտությունը բաց համակարգ է, ուստի համաշխարհային գիտակրթական տարածք սահուն ձևով ինտեգրվելու գրավականը կայանում է նաև գիտության ոլորտում համաշխարհային մասշտաբով գործընկերներ ձեռք բերելու և նրանց հետ ակտիվ համագործակցություն ծավալելու մեջ: Հենց դա է պատճառը, որ վերջին 4 տարիների ընթացքում կնքվել են ավելի քան 30 միջազգային համաձայնագրեր և պայմանագրեր աշխարհի բազմաթիվ երկրների, մասնավորապես՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ռումինիայի, Չինաստանի հետ: Հայաստանը կարողացել է գիտական ծրագրեր իրականացնել նաև եվրոպական շրջանակային ծրագրերի ոլորտում և նույնիսկ չլինելով լիարժեք անդամ՝ դարձել է մի շարք ծրագրերի համակարգող:

Գիտության արդյունքների առևտրայնացումը ևս մեր ժամանակների կարևոր խնդիրներից է: Ցանկացած պետությունում գիտության որակը համարվում է բարվոք, եթե գիտության վրա ծախսվող գումարների մեծ մասը գալիս է արդյունաբերությունից, ոչ թե պետության միջոցներից: Այսինքն՝ գիտություն-մասնավոր հատված համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի տվյալ պետության գիտության ոլորտում ունեցած հաջողությունների համար: Սա լուրջ խնդիր է հանդիսանում ԱՊՀ բոլոր երկրների, այդ թվում՝ ՀՀ համար: Այս ուղղությունը զարգացնելու նպատակով ՀՀ ԿԳՆ ԳԴԿ կողմից առաջիկայում ևս կհայտարարվեն մրցույթներ, որոնց մասնակցելու հրավերը ուղղվում է նաև ԵՊԲՀ-ին:

Խոսելով գիտություն ոլորտում բարեփոխումներ իրականացնող երկրների մասին, որոնք բաժանվում են 2 դասի՝ երկրներ, որոնք բարեփոխումներ են իրականացնում օրենսդրական դաշտում և երկրներ, որոնք իրականացնում են մեզածրագրեր, պրոֆեսոր Հարու-

թյունյանը նշեց, որ մեր երկիրը որոշել է ընթանալ մեզածրագրերի ուղղությամբ, ինչը բավականին ռիսկային քայլ է՝ հաշվի առնելով մեր աշխարհաքաղաքական դիրքը: Այս մեզածրագրերից առաջինը միջուկային բժշկության ծրագիրն է, որը նախատեսված է ոչ միայն մեր երկրի, այլև ամբողջ տարածաշրջանի համար, իսկ մյուսը՝ նոր, երրորդ սերնդի արագացուցչային համալիրի ստեղծումն է (CANDLE), որի իրականացումից հետո մեր երկրում բուռն զարգացում կապրեն մի շարք ոլորտներ՝ կենսաբանություն, ֆիզիկա, բժշկագիտություն, քիմիա, էլեկտրոնիկա, տեխնոլոգիա, ֆարմակոլոգիա, նանոտեխնոլոգիաներ և այլն:

ՀՀ ԿԳՆ ԳԴԿ նախագահ Ս. Հարությունյանը իր ելույթում առանձնակի շեշտադրմամբ անդրադարձ կատարեց մեր երկրում **հետազոտական համալսարանների ստեղծման հեռանկարային ծրագրին**: Սահմանափակելով մեր երկրում հետազոտական համալսարանների ստեղծման հնարավորությունները՝ Ս. Հարությունյանը հավաստիացրեց, որ մեր համալսարանի ներկայիս կարգավիճակը թույլ է տալիս ենթադրելու, որ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը ունի բոլոր նախադրյալները ստանալու հետազոտական համալսարանի կարգավիճակ, որը հնարավոր կդառնա միայն ճիշտ և նպատակաուղղված համագործակցության արդյունքում:

Եզրափակելով իր ելույթը՝ Ս. Հարությունյանը նշեց, որ տարիների գիտակրթական ավանդույթ և փորձ ունեցող մեր համալսարանը ունի հզոր գիտական պոտենցիալ և առաջ է ընթանում ճիշտ քայլերով: Նա կոչ արեց առավել ակտիվ մասնակցություն ունենալ ԳԴԿ կողմից հայտարարվող մրցույթներում, որը ևս կնպաստի մեր համալսարանի առջև դրված ռազմավարական խնդիրների արդյունավետ իրականացմանը: